

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Զբաղվածություն

1.4.1.1. Զբաղվածության ցուցանիշների գնահատումն ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների

Զեկույցի այս հատվածում ներկայացված են աշխատանքի շուկայի 2017-2018թթ. եռամսյակային միջին և միջին տարեկան հիմնական ցուցանիշները՝ գնահատված աշխատուժի հետազոտության¹ արդյունքներով:

Հետազոտության հիմքում դրված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և հաշվարկման մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են ԱՄԿ (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) և (կամ)² Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներին և դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Ստորև ներկայացվում են հետազոտության վերաբերյալ մեթոդաբանական որոշ պարզաբանումներ:

Հետազոտության ընտրանքային հիմնական միավորները մասնավոր տնային տնտեսություններն (SS) են:

Հետազոտվող միավորը 15-75 (ներառյալ) տարեկան անձինք են, ովքեր.

ա) սովորաբար բնակվում են տվյալ SS-ում.

բ) ժամանակավորապես (մինչև 3 ամիս) չեն բնակվում տվյալ SS-ում՝ գտնվելով ՀՀ մեկ այլ բնակավայրում կամ երկրից դուրս.

գ) գտնվում են պարտադիր ժամկետային զինծառայության մեջ:

Դիտարկվող ժամանակաշրջանը տարվա բոլոր ամիսներն են:

Հետազոտվող ժամանակահատվածը հետազոտությանը (հարցմանը) նախորդող վերջին օրացուցային **շաբաթն** է՝ երկուշաբթիից կիրակի օրը (ներառյալ):

Ընտրանքային համակցության ամսական չափը կազմում է 649 SS, եռամսյակայինը՝ 1 947 SS, իսկ տարեկանը՝ 7 788 SS՝ ընդգրկելով ք. Երևանը և հանրապետության բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերը:

Հետազոտության մեթոդաբանության համաձայն յուրաքանչյուր հարցվող ըստ աշխատաշուկայում մասնակցության աստիճանի դասակարգվում է միմյանց բացառող հետևյալ երեք խմբերի՝ **զբաղված կամ գործազուրկ կամ տնտեսապես ոչ ակտիվ (2018թ.-ից՝ աշխատուժից դուրս բնակչություն)**:

¹ Հետազոտության 2017թ. արդյունքները, ինչպես նաև մեթոդաբանությունը և ցուցանիշների սահմանումները մանրամասն ներկայացված են «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018» վիճակագրական ժողովածուում, որը զետեղված է ՀՀ ՎԿ պաշտոնական կայքի հասցեում: <https://www.armstat.am/am/?nid=82&year=2018>. իսկ հետազոտության անվանագերծված տվյալների բազան հասանելի է ՀՀ ՎԿ կայքի www.armstat.am/am/?nid=212 հասցեում:

² ԱՄԿ-ի և Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներում առանձին դեպքերում առկա են որոշ տարբերություններ: Մասնավորապես, պարտադիր ժամկետային զինծառայողներն ըստ ԱՄԿ մեթոդաբանության դասվում են զբաղվածների (տե՛ս, ILO, ISCO- 08), իսկ ըստ Եվրոստատի (տե՛ս European Commission, The European Union labour force survey, Methods and definitions-2001)՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության խմբին: Տվյալ դեպքում ՀՀ ՎԿ-ն հիմք է ընդունել վերջինս, որը կիրառվում է Եվրամիության անդամ երկրներում:

**Աշխատանքի շուկայի վիճակագրության
մեթոդաբանության փոփոխության վերաբերյալ**

2018 թվականի հունվարից սկսած ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը՝ տնային տնտեսություններում (S/S) իրականացվող աշխատուժի հետազոտության շրջանակում: Մասնավորապես, **2018թ. հունվարից մեկնարկել է Աշխատանքի վիճակագրիների միջազգային 19-րդ համաժողովում (19-րդ ԱՎՄՀ) ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» 2013թ. հոկտեմբերին ընդունված բանաձևի¹ առանցքային դրույթների ներդրման և տեղայնացման գործընթացը:**

19-րդ ԱՎՄՀ ներդրման շրջանակում.

▪ **Ընդլայնվել է «աշխատանքային գործունեություն»** հասկացության շրջանակը, որի նպատակն է ճանաչել և չափելի դարձնել աշխատանքի բոլոր ձևերը՝ հստակ տարբերակված ըստ վճարվող և չվճարվող աշխատանքների: Ըստ նոր սահմանման, **աշխատանքային գործունեությունը** ցանկացած տարիքի և սեռի անձանց կողմից իրականացվող ցանկացած գործունեությունն է, որի նպատակն է արտադրել ապրանքներ կամ տրամադրել ծառայություններ՝ սեփական կամ այլոց սպառման համար՝ անկախ աշխատանքի ֆորմալ, ոչ ֆորմալ բնույթից կամ գործունեության **օրինականությունից:** Ընդ որում, «զբաղվածությունը» համարվում է աշխատանքի հինգ ձևերից միակը, որն իրականացվում է այլոց համար՝ **վարձատրության կամ եկամտի դիմաց:**

Աշխատանքի հինգ ձևերն են.

1. **Զբաղվածություն**՝ այլոց համար կատարվող եկամուտ հետապնդող աշխատանք.
2. **Սեփական սպառման համար ապրանքների արտադրություն և ծառայությունների տրամադրում.**

2ա. **սեփական սպառման համար ապրանքների արտադրություն** (օրինակ՝ հողագործական, անասնապահական ապրանքների արտադրություն՝ անմիջապես սպառման կամ պահեստավորման համար, սեփական տան կառուցում, կապիտալ նորոգում, կահույքի պատրաստում, հագուստի կարում, գործում, վառելիքայտի հավաքում, պահեստավորում և այլն).

2ա1. Մնդամթերքի բնաիրային արտադրություն (օրինակ՝ հողագործության, բուսաբուծության, անասնապահական, անասնաբուծական ապրանքների արտադրություն, ձկնորսություն, հավաքչություն և այլն).

2բ. **սեփական սպառման համար ծառայությունների տրամադրում** (օրինակ՝ չվճարվող տնային գործեր, ընտանիքի ծեր / հիվանդ / մանկահասակ անդամի խնամք և այլն).

3. **Չվարձատրվող աշխատանքային պրակտիկա**՝ այլոց համար կատարվող չվճարվող աշխատանք՝ աշխատատանքային փորձ կամ հմտություն ձեռք բերելու նպատակով.

4. **Կամավոր աշխատանք**՝ այլոց համար կատարվող ոչ հարկադիր աշխատանք.

¹ Բնօրինակը՝ Resolution concerning statistics of work, employment and labour underutilization, Adopted by the Nineteenth International Conference of Labour Statisticians (October 2013) http://www.ilo.org/global/statistics-and-databases/meetings-and-events/international-conference-of-labour-statisticians/19/WCMS_230304/lang--en/index.htm
Բնօրինակի պաշտոնական թարգմանությունը՝ Резолюция I 19 Международной конференции статистиков труда (на русском языке), ссылка на сайт Международной организации труда (МОТ), http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/normativeinstrument/wcms_235603.pdf

5. Այլ աշխատանք՝ այլոց համար կատարվող (օրինակ՝ աշխատանք կալանավայրում), որի գնահատման մեթոդաբանությունը դեռևս մշակման գործընթացում է:

Աշխատանքային գործունեության ձևերի չափման սույն մեթոդաբանության առանձնահատկություններից է նաև այն, որ մարդը ՄԻԱԺԱՄԱՆԱԿ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում (տե՛ս 104-105 էջերի աղյուսակները):

▪ **Ընդլայնվել է** «աշխատուժի թերօգտագործում» (labour underutilization) հասկացության շրջանակը՝ բնութագրելով ոչ միայն գործազուրկ բնակչության չբավարարված առաջարկը, այլ նաև աշխատունակ բնակչության¹ մյուս խմբերի՝ զբաղվածների և աշխատուժից դուրս բնակչության չբավարարված առաջարկը (տե՛ս գծապատկեր 1-ը, էջ 103):

Աշխատուժի թերօգտագործումը (**ԱԹ**) բնութագրող ցուցանիշներն են.

1. **ԱԹ1.** Գործազրկության մակարդակ.
2. **ԱԹ2.** Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության² (time-related underemployment) և գործազրկության զուգորդված մակարդակ.
3. **ԱԹ3.** Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ.
4. **ԱԹ4.** Աշխատուժի թերօգտագործման ազդեցացված ցուցանիշ:

▪ Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում **ընդլայնվել է** աշխատանքի շուկայի մշտադիտարկման **առանցքային** վիճակագրական ցուցանիշների **անհրաժեշտ նվազագույն շրջանակը:**

▪ **Վերանայվել** կամ փոփոխության են ենթարկվել մի շարք ցուցանիշների սահմանումները:

Զբաղվածության նոր ցուցանիշի սահմանան համաձայն. «Զբաղված համարվում են 15-75 տարեկան անձինք, ովքեր հետազոտվող շաբաթում եկամուտ / աշխատավարձ ստանալու նպատակով **գտնե մեկ ժամ** զբաղվել են ապրանքների արտադրությամբ կամ տրամադրել են ծառայություններ՝ **բացառապես այլոց սպառման համար**»: *Այսինքն, նախկին սահմանման համեմատ զբաղվածների թվաքանակից բացառվել են նրանք, ովքեր հետազոտվող շաբաթում իրենց տնտեսությունում զբաղվել են **ապրանքների արտադրությամբ սեփական վերջնական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ:***

▪ **Վերանայվել** են որոշ ցուցանիշների անվանումները:

1. «Տնտեսապես ակտիվ բնակչություն» եզրույթը վերանվանվել է «Աշխատուժ» (բնօրինակը՝ Labour force): Համապատասխանաբար, «Տնտեսական ակտիվության մակարդակ» եզրույթը վերանվանվել է «աշխատուժի մասնակցության մակարդակ» (Labour force participation rate):

2. «Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն» եզրույթը վերանվանվել է «աշխատուժից դուրս բնակչություն», որի համարժեք բնօրինակն է “Population out of labour force”:

Աշխատանքի շուկայի վիճակագրական չափման միջազգային ստանդարտների վերոնշյալ փոփոխության հետևանքով, օբյեկտիվորեն առաջացել է աշխատանքի շուկայի (ԱՇ) ցուցանիշների

¹ Սույն հետազոտության մեթոդաբանության շրջանակում աշխատունակ տարիք սահմանված է 15-75տ. ներառյալ բնակչությունը:

² Զբաղված անձինք են, ովքեր աշխատել են նորմալ աշխատաժամանակից պակաս, որովհետև չեն կարողացել գտնել լրիվ աշխատանքային օր տևողությամբ աշխատանք կամ աշխատաժամանակը կրճատվել է գործատուի նախաձեռնությամբ, սակայն ցանկացել և պատրաստ են եղել փոխել իրենց աշխատանքային վիճակը:

Ժամանակագրական շարքերի որոշակի խզում¹, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխան ցուցանիշները նախորդ տարիների հետ համեմատելիս:

Այստեղ և հետագա հրապարակումներում 19-րդ ԱՎՄՀ բանաձևի դրույթների համաձայն գնահատված **ԱՇ** 2018թ. ցուցանիշները հրապարակված են 2017թ.-ի համապատասխան ցուցանիշների հետ համեմատությամբ՝ հաշվարկված ՆՈՐ (19-րդ ԱՎՄՀ) և ՆԱԽԿԻՆ (13-րդ ԱՎՄՀ) մեթոդաբանություններով:

Նոր ստանդարտների ներդրման գործընթացի աշխատատարությամբ պայմանավորված, զեկույցի սույն հրապարակման մեջ ներկայացված են աշխատանքի շուկայի մշտադիտարկման առանցքային վիճակագրական ցուցանիշները՝ **նվազագույն անհրաժեշտ շրջանակով**, սակայն զուգահեռաբար.

- 2017թ. ցուցանիշները **հնարավորինս** վերահաշվարկված **նոր** մեթոդաբանությամբ՝ համեմատելու համար 2018թ. տվյալների հետ.
- 2018թ. ցուցանիշները վերահաշվարկված **նախկին** մեթոդաբանությամբ՝ համեմատելու համար 2017թ. տվյալների հետ:

Նոր ստանդարտներով առաջարկվող մեթոդաբանական առանցքային փոփոխությունները և լրացումներն առավել մանրամասն կներկայացվեն «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2019» վիճակագրական ժողովածուում և Աշխատուժի հետազոտության «Որակի հոչակագրի» և Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտի մեթատվյալներում: Նոր մեթոդաբանության վերաբերյալ պարզաբանումներ՝ շնորհանդեսի ձևաչափով, զետեղված են ՀՀ ՎԿ կայքի հետևյալ հասցեում՝ <http://www.armstat.am/file/doc/99508493.pdf>:

2018թ. և 2017թ. վերահաշվարկված ցուցանիշները դեռևս նախնական են:

¹ Առանձնապես նշանակալի է զբաղվածության ցուցանիշի փոփոխությունը՝ ի հաշիվ բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք արտադրողների զբաղվածության թվաքանակից բացառման և գործազուրկների և/կամ աշխատուժից դուրս բնակչության թվաքանակներում վերաբաշխման: Նշյալ փոփոխության արդյունքում՝ փոփոխության են ենթարկվել նաև բնակչության տնտեսական ակտիվության մակարդակները բնութագրող ցուցանիշները:

Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները, եռամսյակներով
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	2017թ.				2018թ.				Փոփոխությունը			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
	1000 մարդ								%			
Հաշվարկն ըստ ՆԱԽԿԻՆ մեթոդաբանության												
Աշխատանքային ռեսուրսներ	2 042.1	2 094.1	1 951.7	2 006.5	2 055.4	2 019.0	1 989.5	1 989.0	100.7	96.4	101.9	99.1
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	839.3	826.7	714.6	784.8	807.1	726.2	649.8	751.1	96.2	87.8	90.9	95.7
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1 202.9	1 267.4	1 237.1	1 221.7	1 248.2	1 292.8	1 306.2	1 237.9	103.8	102.0	105.6	101.3
Զբաղվածներ	974.5	1 041.5	1 032.8	1 001.5	1 027.9	1 090.3	1 105.9	1 028.9	105.5	104.7	107.1	102.7
<i>որից՝</i> զբաղված սեփական սպառման ապրանքների արտադրությամբ	98.7	102.7	129.5	104.8	112.2	153.7	208.4	158.8	113.7	149.7	160.9	151.6
Գործազուրկներ	228.4	225.9	204.2	220.2	220.2	202.5	200.3	209.0	96.4	89.6	98.1	94.9
Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության												
Աշխատանքային ռեսուրսներ	2 042.1	2 094.1	1 951.7	2 006.5	2 055.4	2 019.0	1 989.5	1 989.0	100.7	96.4	101.9	99.1
Աշխատուժից դուրս բնակչություն	922.7	912.5	823.4	876.5	902.0	846.0	824.9	890.1	97.8	92.7	100.2	101.6
Աշխատուժ (աշխատուժի առաջարկ)	1 119.4	1 181.6	1 128.2	1 130.0	1 153.3	1 173.0	1 164.5	1 098.9	103.0	99.3	103.2	97.2
Զբաղվածներ	875.9	938.8	903.3	896.7	915.7	936.6	930.8	870.1	104.5	99.8	103.0	97.0
Մնդամթերքի բնաիրային արտադրության գործունեություն իրականացնողներ	98.7	102.7	129.5	104.8	112.2	153.7	208.4	158.8	113.7	149.7	160.9	151.6
Գործազուրկներ	243.6	242.8	224.9	233.3	237.6	236.4	233.7	228.8	97.5	97.4	103.9	98.1

Բնակչության տնտեսական ակտիվությունը, եռամսյակներով
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	2017թ.				2018թ.				Փոփոխությունը			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
	%								+/-			
Հաշվարկն ըստ ՆԱՄԿԻՆ մեթոդաբանության												
Տնտեսական ակտիվության մակարդակը ¹	58.9	60.5	63.4	60.9	60.7	64.0	65.7	62.2	1.8	3.5	2.3	1.3
Զբաղվածության մակարդակը ¹	47.7	49.7	52.9	49.9	50.0	54.0	55.6	51.7	2.3	4.3	2.7	1.8
Գործազրկության մակարդակը ²	19.0	17.8	16.5	18.0	17.6	15.7	15.3	16.9	-1.4	-2.2	-1.2	-1.1
Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության												
Աշխատուժի մասնակցության մակարդակը ¹	54.8	56.4	57.8	56.3	56.1	58.1	58.5	55.2	1.3	1.7	0.7	-1.1
Զբաղվածության մակարդակը ¹	42.9	44.8	46.3	44.7	44.6	46.4	46.8	43.7	1.7	1.6	0.5	-1.0
Մնդամթերքի բնաիրային արտադրության գործունեություն իրականացնողներ ¹	4.8	4.9	6.6	5.2	5.5	7.6	10.5	8.0	0.7	2.7	3.8	2.8
Գործազրկության մակարդակը ²	21.8	20.5	19.9	20.6	20.6	20.2	20.1	20.8	-1.2	-0.4	0.1	0.2

Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

միջին տարեկան

	2017թ.	2018թ.	Փոփոխությունը
	1000 մարդ		%
Հաշվարկն ըստ ՆԱՄԿԻՆ մեթոդաբանության			
Աշխատանքային ռեսուրսներ	2 021.3	2 015.3	99.7
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	790.6	733.0	92.7
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1 230.7	1 282.2	104.2
Զբաղվածներ	1 011.7	1 073.8	106.1
որից՝ զբաղված սեփական սպառման համար ապրանքների արտադրությամբ	108.4	158.3	146.0
Գործազուրկներ	219.0	208.4	95.2
Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության			
Աշխատանքային ռեսուրսներ	2 021.3	2 015.3	99.7
Աշխատուժից դուրս բնակչություն	881.5	865.8	98.2
Աշխատուժ (աշխատուժի առաջարկ)	1 139.9	1 149.5	100.8
Զբաղվածներ	903.3	915.5	101.4
Մնդամթերքի բնաիրային արտադրության գործունեություն իրականացնողներ	108.4	158.3	146.0
Գործազուրկներ	236.5	234.0	98.9

¹ Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:


² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության / աշխատուժի թվաքանակի նկատմամբ:

Բնակչության տնտեսական ակտիվությունը
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

միջին տարեկան

	2017թ.	2018թ.	Փոփոխությունը
	%		+/-
Հաշվարկն ըստ ՆԱԽԿԻՆ մեթոդաբանության			
Տնտեսական ակտիվության մակարդակ ¹	60.9	63.6	2.7
Զբաղվածության մակարդակ ¹	50.1	53.3	3.2
Գործազրկության մակարդակ ²	17.8	16.3	-1.5
Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության			
Աշխատուժի մասնակցության մակարդակ ¹	56.4	57.0	0.6
Զբաղվածության մակարդակ ¹	44.7	45.4	0.7
Մանկամթերքի բնաիրային արտադրության գործունեություն իրականացնողներ ¹	5.4	7.9	2.5
Գործազրկության մակարդակ ²	20.8	20.4	-0.4

Գծապատկեր 1. Աշխատուժի թերօգտագործման չափման շրջանակը
(հիմքը՝ 19-րդ ԱՎՄՀ բանաձև)



¹ Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:
² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության / աշխատուժի թվաքանակի նկատմամբ:

Աշխատուժի թերօգտագործում, և թերօգտագործման մակարդակ, եռամսյակներով
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	2017թ.				2018թ.			
	I	II	III	IV	I	II	III	IV
	<i>1 000 մարդ</i>							
Հաշվարկն ըստ ՆԱԽԿԻՆ մեթոդաբանության								
ԱԹ1. Գործազրկություն	228.4	225.9	203.5	220.2	220.2	202.5	200.3	209.0
ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերգբաղվածության և գործազրկության զուգորդված ցուցանիշ	296.6	302.1	294.9	304.0	276.5	249.5	231.8	249.1
ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված ցուցանիշ	473.6	427.0	365.2	374.6	354.0	380.8	279.6	322.7
ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ազդեցացված ցուցանիշ	541.9	503.3	456.6	458.4	410.3	427.8	311.1	362.7
Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերգբաղվածություն	68.3	76.3	91.5	83.8	56.3	47.0	31.4	40.1
Երկարատև գործազրկություն	125.7	133.0	15.9	116.0	126.1	135.9	127.6	116.2
	%							
ԱԹ1. Գործազրկության մակարդակ ¹ , %	19.0	17.8	16.5	18.0	17.6	15.7	15.3	16.9
ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերգբաղվածության և գործազրկության զուգորդված մակարդակ ² , %	24.7	23.8	24.5	24.9	22.2	19.3	17.3	20.2
ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ ³ , %	32.7	29.1	25.2	27.2	24.0	25.9	18.4	22.2
ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ազդեցացված ցուցանիշ ² , %	37.4	34.3	31.5	33.3	27.8	29.1	20.5	25.0
Թերգբաղվածության մակարդակ ³ , %	7.0	7.3	8.9	8.4	5.5	4.3	2.8	3.9
Երկարատև գործազրկության մակարդակ ⁴ , %	55.1	58.9	57.0	52.7	57.3	67.1	63.7	55.6
Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության								
	<i>1 000 մարդ</i>							
ԱԹ1. Գործազրկություն	243.6	242.8	224.2	233.3	237.6	236.4	233.7	228.8
ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերգբաղվածության և գործազրկության զուգորդված ցուցանիշ	288.5	296.7	272.1	290.1	271.5	263.9	254.4	252.7
ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված ցուցանիշ	572.3	529.7	578.3	479.4	466.2	414.7	410.5	444.1
ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ազդեցացված ցուցանիշ	617.2	583.7	626.2	536.2	500.2	442.2	431.2	467.9
Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերգբաղվածություն	44.9	54.0	47.9	56.8	34.0	27.5	20.6	23.9
Երկարատև գործազրկություն	125.7	133.0	115.9	116.0	126.1	135.9	127.6	116.2

¹ Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության / աշխատուժի թվաքանակի նկատմամբ:
² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության / աշխատուժի և պոտենցիալ աշխատուժի թվաքանակների հանրագումարի նկատմամբ:
³ Հաշվարկված է զբաղվածների թվաքանակի նկատմամբ:
⁴ Հաշվարկված է գործազուրկների թվաքանակի նկատմամբ:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2017թ.				2018թ.			
	I	II	III	IV	I	II	III	IV
	%							
ԱԹ1. Գործազրկության մակարդակ ¹ , %	21.8	20.5	19.9	20.6	20.6	20.2	20.1	20.8
ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության և գործազրկության զուգորդված մակարդակ ¹ , %	25.8	25.1	24.1	25.7	23.5	22.5	21.8	23.0
ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ ² , %	39.5	36.1	39.0	34.8	33.7	30.7	30.6	33.8
ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ազդեցացված ցուցանիշ ² , %	42.6	39.7	42.2	39.0	36.2	32.7	32.1	35.7
Թերզբաղվածության մակարդակ ³ , %	5.1	5.8	5.3	6.3	3.7	2.9	2.2	2.8
Երկարատև գործազրկության մակարդակ ⁴ , %	51.6	54.8	51.7	49.7	53.1	57.5	54.6	50.8

Աշխատուժի թերօգտագործում և թերօգտագործման մակարդակ
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

միջին տարեկան

	2017թ.	2018թ.	2017թ.	2018թ.
Հաշվարկն ըստ ՆԱԽԿԻՆ մեթոդաբանության				
	1 000 մարդ		%	
ԱԹ1. Գործազրկություն	219.0	208.4	17.8	16.3
ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության և գործազրկության զուգորդված ցուցանիշ ²	297.8	251.6	24.2	19.6
ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված ցուցանիշ ²	410.1	336.1	28.8	22.7
ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ազդեցացված ցուցանիշ ²	488.8	379.3	34.4	25.6
Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածություն	78.8	43.2	7.8	4.0
Երկարատև գործազրկություն	122.4	126.4	59.9	60.6
Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության				
	1 000 մարդ		%	
ԱԹ1. Գործազրկություն	236.5	234.0	20.7	20.4
ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության և գործազրկության զուգորդված ցուցանիշ ²	286.9	260.4	25.2	22.7
ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված ցուցանիշ ²	518.4	434.8	36.5	32.2
ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ազդեցացված ցուցանիշ ²	568.8	461.1	40.0	34.2
Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածություն	50.4	26.3	5.6	2.9
Երկարատև գործազրկություն	122.4	126.4	51.7	54.0

¹ Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության / աշխատուժի թվաքանակի նկատմամբ:


² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության/աշխատուժի և պոտենցիալ աշխատուժի թվաքանակների հանրագումարի նկատմամբ:

³ Հաշվարկված է զբաղվածների թվաքանակի նկատմամբ:

⁴ Հաշվարկված է գործազուրկների թվաքանակի նկատմամբ:

Աշխատուժի թերօգտագործման մակարդակներ, միջին տարեկան

Հաշվարկն ըստ ՆՈՒ մեթոդաբանության



Աշխատանքային գործունեության մեջ ներգրավված բնակչությունն¹
 ըստ աշխատանքի ձևերի, 2018թ. եռամսյակներով
 (Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	Ընդամենը, 1 000 մարդ				Բնակչության մասնակցության մակարդակը ² , %			
	I	II	III	IV	I	II	III	IV
Զբաղվածություն	915.7	936.6	930.8	870.1	44.6	46.4	46.8	43.7
Չվարձատրվող աշխատանքային պրակտիկա	9.1	6.8	5.7	5.1	0.4	0.3	0.3	0.3
Սեփական սպառման համար ապրանքների արտադրության աշխատանքային գործունեություն	423.2	592.2	884.1	640.3	20.6	29.3	44.4	32.2
Սննդամթերքի բնախրային արտադրության աշխատանքային գործունեություն	346.3	489.4	526.5	371.3	16.8	24.2	26.5	18.7
Սեփական սպառման համար ծառայությունների տրամադրման աշխատանքային գործունեություն	1 524.2	1 475.3	1 469.6	1 477.5	74.2	73.1	73.9	74.3
Կամավոր աշխատանք	219.6	278.1	258.9	221.2	10.7	13.8	13.0	11.1


¹ Նույն մարդը միաժամանակ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում:

² Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:

**Աշխատանքային գործունեության մեջ ներգրավված բնակչությունն¹
ըստ աշխատանքի ձևերի, 2018թ.**
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	Ընդամենը, 1 000 մարդ	միջին տարեկան Բնակչության մասնակցության մակարդակը ² , %
Զբաղվածություն	915.5	45.4
Զվարճատրվող աշխատանքային պրակտիկա	6.7	0.3
Մեփական սպառման համար ապրանքների արտադրության աշխատանքային գործունեություն	637.2	31.6
Սննդամթերքի բնաիրային արտադրության աշխատանքային գործունեություն	434.5	21.6
Մեփական սպառման համար ծառայությունների տրամադրման աշխատանքային գործունեություն	1 487.8	73.8
Կամավոր աշխատանք	243.8	12.1

**Աշխատանքային գործունեության ձևերում բնակչության
մասնակցության մակարդակը, % միջին տարեկան**



¹ Նույն մարդը միաժամանակ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում:

² Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:

Աշխատանքային ռեսուրսների բաշխումն ըստ չվճարվող աշխատանքային գործունեության ձևերի, 2018թ., եռամսյակային
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	Ընդամենը ¹ , %		Սեփական սպառման համար ապրանքների արտադրություն		Կամավոր աշխատանք		Զվարճատրվող աշխատանքային պրակտիկա	
	I	IV	I	IV	I	IV	I	IV
Աշխատանքային ռեսուրսներ	100	100	100	100	100	100	100	100
Զբաղված	55.1	47.3	59.3	47.6	49.0	47.1	20.7	21.6
Գործազուրկ	10.9	10.1	7.2	8.4	16.0	14.2	52.8	22.7
Աշխատուժից դուրս բնակչություն	33.9	42.5	33.5	44.0	35.0	38.6	26.5	55.7
Զբաղված	100	100	67.7	71.1	31.8	28.7	0.5	0.2
Գործազուրկ	100	100	41.2	58.5	52.3	40.4	6.5	1.1
Աշխատուժից դուրս բնակչություն	100	100	62.1	73.2	36.8	26.2	1.0	0.6

Աշխատանքային ռեսուրսների բաշխումն ըստ չվճարվող աշխատանքային գործունեության ձևերի, 2018թ.
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

միջին տարեկան

	Ընդամենը ¹ , %	Սեփական սպառման համար ապրանքների արտադրություն	Կամավոր աշխատանք	Զվարճատրվող աշխատանքային պրակտիկա
Աշխատանքային ռեսուրսներ	100	100	100	100
Զբաղված	52.8	54.3	50.2	23.3
Գործազուրկ	10.0	7.5	14.8	39.0
Աշխատուժից դուրս բնակչություն	37.2	38.2	35.0	37.7
Զբաղված	100	70.5	29.2	0.3
Գործազուրկ	100	51.6	45.7	2.6
Աշխատուժից դուրս բնակչություն	100	70.4	28.9	0.7

¹ Անկախ աշխատաշուկայում մասնակցության աստիճանի, մարդը կարող է ներգրավված լինել չվճարվող աշխատանքային գործունեության ձև(եր)ում:

1.4.1.2. Գործազրկության ցուցանիշներն ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տվյալների

Աշխատուժի առաջարկը, 2019թ.

ամսվա վերջի դրությամբ


	Աշխատանք փնտրողներ		նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	81 914	96.0	64 618	92.6
Փետրվար	82 426	97.5	65 103	94.1
Մարտ	82 718	99.1	64 955	95.0

Աշխատուժի առաջարկն ըստ սեռի, 2019թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ				նրանցից՝ գործազուրկներ			
	կին		տղամարդ		կին		տղամարդ	
	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	54 211	96.9	27 703	94.5	43 108	92.8	21 510	92.3
Փետրվար	54 601	98.5	27 825	95.7	43 404	94.3	21 699	93.8
Մարտ	54 760	100.0	27 958	97.3	43 245	94.9	21 710	95.2

Աշխատուժի առաջարկն ըստ տարիքային խմբերի և սեռի, 2019թ. մարտ



Առաջին անգամ աշխատանք փնտրողներն ըստ կրթության, 2019թ. մարտ

ամսվա վերջի դրությամբ


	Ընդամենը		Կին		Տղամարդ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	27 441	100	17 454	100	9 987	100
Հետբուհական, բարձրագույն	3 352	12.2	2 321	13.3	1 031	10.3
Թերի բարձրագույն, միջին մասնագիտական	4 311	15.7	3 265	18.7	1 046	10.5
Նախամասնագիտական (արհեստագործական)	1 132	4.1	663	3.8	469	4.7
Միջնակարգ ընդհանուր	16 064	58.5	9 877	56.6	6 187	62.0
Հատուկ ընդհանուր	8	0.0	7	0.0	1	0.0
Հիմնական ընդհանուր	2 326	8.5	1 216	7.0	1 110	11.1
Տարրական ընդհանուր	248	0.9	105	0.6	143	1.4
<i>ընդամենից՝</i> երիտասարդներ (16-29 տարեկաններ)	10 630	38.7	7 173	41.1	3 457	34.6
30 տարեկան և բարձր	16 811	61.3	10 281	58.9	6 530	65.4

Աշխատանք փնտրողների կազմն ըստ սեռի, 2019թ. մարտ

ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը		Կին		Տղամարդ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	82 718	100	54 760	100	27 958	100
<i>նրանցից՝</i>						
զբաղվածներ	17 327	20.9	11 259	20.6	6 068	21.7
տարիքային կենսաթոշակի տարիքը լրացած անձինք	435	0.5	256	0.5	179	0.6
գործազուրկներ	64 955	78.5	43 245	79.0	21 710	77.7
<i>այդ թվում՝</i>						
հաշմանդամություն ունեցող	2 476	3.0	1 037	1.9	1 439	5.2
հաշմանդամություն չունեցող	62 479	75.5	42 208	77.1	20 271	72.5

Աշխատանք փնտրողներն ըստ սեռի, 2019թ. մարտ




Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2019թ. մարտ

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ		նրանցից՝ գործազուրկներ		
	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	82 718	99.1	64 955	95.0	100
ք. Երևան	12 641	96.1	9 083	92.5	14.0
Արագածոտն	4 335	92.5	3 327	95.7	5.1
Արարատ	7 554	102.6	5 549	91.2	8.5
Արմավիր	7 914	109.3	6 090	103.5	9.4
Գեղարքունիք	5 757	95.8	4 740	94.8	7.3
Լոռի	9 788	104.9	9 259	104.1	14.3
Կոտայք	9 164	92.1	6 655	84.4	10.2
Շիրակ	15 584	98.2	12 011	94.1	18.5
Սյունիք	3 436	99.2	2 968	93.6	4.6
Վայոց ձոր	1 294	101.0	943	97.0	1.5
Տավուշ	5 251	101.7	4 330	97.7	6.7

Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2019թ. մարտ

%-ով նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



16-29 տարեկան աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2019թ. մարտ

ամսվա վերջի

դրույթամբ

	Աշխատանք փնտրող երիտասարդներ		նրանցից՝ գործազուրկներ		
	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	18 799	95.1	13 877	84.4	100.0
ք. Երևան	2 301	101.5	1 465	93.2	10.6
Արագածոտն	1 066	98.1	695	97.5	5.0
Արարատ	2 104	107.6	1 478	93.3	10.7
Արմավիր	1 673	103.9	1 176	98.5	8.5
Գեղարքունիք	1 298	90.8	1 066	88.0	7.7
Լոռի	2 277	98.4	2 058	96.5	14.8
Կոտայք	1 964	95.0	1 466	88.2	10.6
Շիրակ	3 875	86.2	2 659	64.3	19.2
Սյունիք	700	94.7	518	84.2	3.7
Վայոց ձոր	347	98.9	244	90.7	1.8
Տավուշ	1 194	82.5	1 052	78.0	7.6

Աշխատուժի առաջարկն ըստ տարիքային խմբերի, 2019թ. մարտ



Գործազուրկներն ըստ տարիքային խմբերի, 2019թ. մարտ

ամսվա վերջի դրույթամբ

	Ընդամենը		Կին		Տղամարդ		Քաղաք		Գյուղ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	64 955	100	43 245	100	21 710	100	41 853	100	23 102	64 955
16 - 19	590	0.9	434	1.0	156	0.7	444	1.1	146	590
20 - 24	4 908	7.6	3 248	7.5	1 660	7.6	3 257	7.8	1 651	4 908
25 - 29	8 379	12.9	5 766	13.3	2 613	12.0	5 672	13.6	2 707	8 379
30 - 34	8 998	13.9	6 293	14.6	2 705	12.5	5 758	13.8	3 240	8 998
35 - 44	17 770	27.4	11 787	27.3	5 983	27.6	11 360	27.1	6 410	17 770
45 - 54	12 920	19.9	8 070	18.7	4 850	22.3	8 037	19.2	4 883	12 920
55 >	11 390	17.5	7 647	17.7	3 743	17.2	7 325	17.5	4 065	11 390

Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ կրթության, 2019թ. մարտ

ամսվա վերջի դրությամբ


	Ընդամենը		Կին		Տղամարդ		Քաղաք		Գյուղ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	64 955	100	43 245	100	21 710	100	41 853	100	23 102	100
Հետբուհական, բարձրագույն	8 628	13.3	6 529	15.1	2 099	9.7	7 163	17.1	1 465	6.3
Թերի բարձրագույն, միջին մասնագիտական	11 773	18.1	9 636	22.3	2 137	9.8	9 244	22.1	2 529	10.9
Նախամասնագիտական (արհեստագործական)	3 595	5.5	2 140	4.9	1 455	6.7	2 802	6.7	793	3.4
Միջնակարգ ընդհանուր	35 085	54.0	22 014	50.9	13 071	60.2	19 449	46.5	15 636	67.7
Հիմնական ընդհանուր	5 143	7.9	2 624	6.1	2 519	11.6	2 921	7.0	2 222	9.6
Հատուկ ընդհանուր	2	0.0	2	0.0	0	0.0	2	0.0	0	0.0
Տարրական ընդհանուր	729	1.1	290	0.7	439	2.0	272	0.6	457	2.0

Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակն ըստ աշխատանք փնտրելու տևողության և սեռի, 2019թ. մարտ

ամսվա վերջի դրությամբ

	Գործազուրկներ, մարդ	այդ թվում՝ ըստ աշխատանք փնտրելու տևողության					Անավարտ գործազրկության միջին տևողությունը, ամիս
		մինչև 3 ամիս	4 - 6 ամիս	7 - 11 ամիս	1 - 3 տարի	3> տարի	
Ընդամենը	64 955	4 991	4 210	6 907	18 555	30 292	33.4
Կին	43 245	3 085	2 907	4 561	11 688	21 004	34.1
Տղամարդ	21 710	1 906	1 303	2 346	6 867	9 288	32.1

%-ով համապատասխան սեռը ընդամենի նկատմամբ



Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը

	Ընդամենը, մարդ		%	
	2018թ.	2019թ.	2018թ./2017թ.	2019թ./2018թ.
Հունվար	70 010	64 631	86.9	92.3
Փետրվար	69 476	64 861	86.0	93.4
Մարտ	68 777	65 029	85.1	94.6

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը՝ աճողական

	Ընդամենը, մարդ		%	
	2018թ.	2019թ.	2018թ./2017թ.	2019թ./2018թ.
Հունվար	70 010	64 631	86.9	92.3
Հունվար-փետրվար	69 743	64 746	86.5	92.8
Հունվար-մարտ	69 421	64 840	86.0	93.4

Խորհրդատվություն ստացած աշխատանք փնտրողները, 2019թ.

	Տարեկազմից, մարդ	Մարտի վերջի դրությամբ	
		մարդ	ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	36 626	13 255	100
<i>այդ թվում՝ ստացել են խորհրդատվություն հետևյալ հարցերով.</i>			
աշխատանքի և զբաղվածության օրենսդրության	8 688	3 125	23.6
մասնագիտական կողմնորոշման	4 693	1 572	11.9
զբաղվածության ծրագրերի	11 994	4 652	35.1
աշխատանքի փոփոխման	2 267	779	5.9
այլ հարցերով	8 984	3 127	23.6

Աշխատուժի պահանջարկը¹ և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը, 2019թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատուժի պահանջարկը		Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը ²	
	մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %	մարդ	2018թ. նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	2 219	132.2	37	72.5
Փետրվար	2 224	135.4	31	60.8
Մարտ	2 557	145.9	32	66.7

¹ Այստեղ և հետայսու՝ վերաբերում է միայն ՀՀ զբաղվածության պետական գործակալության հետ համագործակցող գործատուների ներկայացրած պահանջարկին:

² Աշխատանք փնտրողների թվաքանակն է մեկ թափուր աշխատատեղի հաշվով:

Աշխատուժի պահանջարկը և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը, մարտ

%-ով նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



Աշխատուժի պահանջարկն ըստ ամիսների

ամսվա ընթացքում

	Ընդամենը, մարդ		այդ թվում՝ թափուր աշխատատեղեր				%, ընդամենը աշխատուժի պահանջարկի նկատմամբ, 2019թ.		
			կրկնվող ¹		չկրկնվող		Ընդամենը	կրկնվող աշխատատեղեր	չկրկնվող աշխատատեղեր
	2018թ.	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.	2019թ.			
Հունվար	2 319	3 004	1 803	2 356	516	648	100	78.4	21.6
Փետրվար	2 239	3 148	1 659	2 320	580	828	100	73.7	26.3
Մարտ	2 367	3 613	1 585	2 377	782	1 236	100	65.8	34.2

Աշխատուժի պահանջարկն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2019թ. մարտ

ամսվա ընթացքում


ՏԳՏԴ (խմբ. 2)		Չկրկնվող թափուր աշխատատեղեր				Նոր ստեղծված աշխատատեղեր
		Ընդամենը, մարդ	ընդամենի նկատմամբ, %	բանվորական մասնագիտությամբ	ընդամենի նկատմամբ, %	
A-U	Ընդամենը, այդ թվում՝	1 236	100	651	100	10
A	Գյուղատնտեսություն	91	7.4	77	11.8	0
B-E	Արդյունաբերություն	253	20.5	213	32.7	3
F	Շինարարություն	43	3.5	40	6.1	0
G	Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	187	15.1	86	13.2	0
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	62	5.0	25	3.8	0

¹ Կրկնվող համարվում է թափուր այն աշխատատեղը, (գբաղմունքը) որի վերաբերյալ գործատուն հայտ է ներկայացրել հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ժամանակահատվածում և չի համալրվել (թափուր է):

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


ՏԳՏԴ (լսմբ. 2)		Չկրկնվող թափուր աշխատատեղեր				Նոր ստեղծված աշխատա- տեղեր
		Ընդամենը, <i>մարդ</i>	ընդամենի նկատ- մամբ, %	բանվորա- կան մասնագի- տությամբ	ընդամենի նկատ- մամբ, %	
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	140	11.3	79	12.1	0
J	Տեղեկատվություն և կապ	10	0.8	7	1.1	0
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	24	1.9	0	0.0	0
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0	0.0	0	0.0	0
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	14	1.1	0	0.0	0
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	4	0.3	1	0.2	0
O	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	59	4.8	7	1.1	0
P	Կրթություն	63	5.1	7	1.1	0
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	70	5.7	13	2.0	3
R	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	43	3.5	7	1.1	4
S	Սպասարկման այլ ծառայություններ	173	14.0	89	13.7	0
T	Տնային տնտեսությունների վարման ծառայություններ	0	0	0	0.0	0
U	Օտարերկրյա (էքստերիտորիալ) կազմակերպությունների գործունեություն	0	0	0	0.0	0

Աշխատուժի պահանջարկն ըստ տնտեսության հատվածների




Աշխատուժի պահանջարկն ըստ մասնագիտական կազմի

մարտ



Աշխատուժի առաջարկը, պահանջարկը և աշխատանքով ապահովվածները, մարտ



Աշխատուժի պահանջարկն ըստ զբաղմունքի տեսակների¹, 2019թ. մարտ

ամսվա վերջի դրությամբ

Կոդը	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը, մարդ
1-9	Ընդամենը	2 557
1	Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների, քաղաքական և հասարակական միավորումների	59
121	Ղեկավարներ՝ կազմակերպությունների և հիմնարկների	3
122	Ղեկավարներ՝ մասնագիտացված ստորաբաժանումների	6
123	Ղեկավարներ՝ գործառնական և այլ ստորաբաժանումների ու ծառայությունների	41
131	Ղեկավարներ՝ փոքր կազմակերպությունների	9
2	Մասնագետներ՝ բարձր որակավորման	371
211	Ֆիզիկոսներ, քիմիկոսներ և մասնագետներ՝ հարակից	8
212	Մաթեմատիկոսներ, վիճակագիրներ և մասնագետներ՝ հարակից	3
213	Մասնագետներ՝ համակարգիչների	13
214	Ճարտարապետներ, ճարտարագետներ և մասնագետներ՝ հարակից	27
221	Մասնագետներ՝ կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների բնագավառների	17
222	Մասնագետներ՝ առողջապահության բնագավառի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության)	169
223	Մասնագետներ՝ բժշկական խնամքի և մանկաբարձության	21
231	Դասավանդողներ՝ համալսարանների, քոլեջների, արհեստագործական դպրոցների և այլ կրթական հաստատությունների	10
232	Դասավանդողներ՝ միջնակարգ դպրոցի	34
233	Դասավանդողներ՝ նախնական դպրոցի և նախադպրոցական կրթության	14
234	Դասավանդողներ՝ հատուկ կրթության բնագավառի	5
235	Մասնագետներ՝ այլ, կրթության բնագավառի	24
241	Մասնագետներ՝ ձեռնարկատիրական գործունեության և կադրերի	12
242	Մասնագետներ՝ իրավունքի բնագավառի	3
243	Մասնագետներ՝ տեղեկատվության և հարակից մասնագիտությունների բնագավառների	3
244	Մասնագետներ՝ հասարակական և հարակից գիտությունների բնագավառների	4

¹ Դասակարգման հիմքը՝ Ջրաղմունքների տեսակների ՀՀ դասակարգիչ:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

245	Գործիչներ՝ գրականության և արվեստի	4
3	Մասնագետներ՝ միջին որակավորման	251
311	Տեխնիկներ՝ ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների	13
312	Աշխատողներ՝ օժանդակ, համակարգչային սարքավորումների սպասարկման	13
313	Տեխնիկներ և օպերատորներ՝ օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների	2
315	Տեսուչներ՝ շինարարության և անվտանգության (հրշեջ, տրանսպորտային միջոցների, արտադրական գործընթացների, արտադրանքի և արտադրության)	1
321	Մասնագետներ՝ բնական գիտությունների բնագավառի	3
322	Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ միջին բժշկական անձնակազմի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության)	35
323	Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ բժշկական խնամքի և մանկաբարձության	16
324	Բուժարարներ և բուժողներ՝ ոչ ավանդական բժշկության	3
331	Դասավանդողներ՝ տարրական կրթության	12
332	Դասավանդողներ՝ նախադպրոցական դաստիարակության և կրթության	5
333	Դասավանդողներ՝ հատուկ կրթության	1
341	Աշխատողներ՝ ֆինանսների և առևտրի բնագավառների	45
342	Գործակալներ՝ առևտրական-առևտրային ծառայությունների	43
343	Աշխատողներ՝ վարչակառավարչական	3
344	Աշխատողներ՝ պետական ծառայությունների	22
346	Աշխատողներ՝ սոցիալական ոլորտի	4
347	Աշխատողներ՝ արվեստի, զվարճությունների և մարզական բնագավառների	30
4	Ծառայողներ՝ գրասենյակների	167
411	Օպերատորներ՝ ստեղնային մեքենաների, և քարտուղարներ	27
412	Ծառայողներ՝ թվային տեղեկատվություն մշակող	7
413	Ծառայողներ՝ զբաղված նյութեր և տրանսպորտ հաշվառելով	3
414	Աշխատողներ՝ գրադարանների, փոստային և այլ ծառայությունների	4
421	Գանձապահներ և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	60
422	Ծառայողներ՝ զբաղված հաճախողների իրազեկմամբ	66
5	Աշխատողներ՝ սպասարկման ոլորտի, մնակարանային կոմունալ տնտեսությունների և առևտրի կազմակերպությունների	518
511	Սպասարկողներ՝ ճամփորդությունների ընթացքում և հասարակական տրանսպորտում, աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	36
512	Սպասարկողներ՝ տնային տնտեսության վարման ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հանրային սննդի կազմակերպությունների	121
513	Աշխատողներ՝ անհատական ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	52
514	Աշխատողներ՝ այլ, անհատական ծառայություններ մատուցող	62
516	Աշխատողներ՝ քաղաքացիների և սեփականության պաշտպանության ծառայությունների	7
522	Վաճառողներ՝ խանութների, և ցուցադրողներ՝ ապրանքների	162
523	Վաճառողներ՝ տաղավարների և շուկաների	28
532	Աշխատողներ՝ ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների	41
533	Աշխատողներ՝ կանաչապատման կազմակերպությունների	8
534	Աշխատողներ՝ էներգամատակարարման կազմակերպությունների	1
6	Աշխատողներ՝ որակավորված՝ գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների	20
611	Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, մանջարանոցային, պտղատու և դաշտային մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների	12
612	Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անասնապահական ապրանքներ արտադրող կազմակերպությունների	2

613	Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, գյուղատնտեսական մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների և անասնաբույծներ	2
614	Աշխատողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անտառային և փայտամթերման կազմակերպությունների և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	1
621	Աշխատողներ՝ անձնական սպառման համար, գյուղատնտեսական, անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնաբուծական ապրանքներ արտադրող	3
7	Բանվորներ՝ որակավորված՝ արդյունաբերական կազմակերպությունների, գեղարվեստական արհեստների, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության և ընդերքի հետազոտման	389
712	Շինարար – տեղակայողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	9
713	Բանվոր–հարդարողներ՝ շինարարական և շինվերանորոգման աշխատանքների, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	6
714	Ներկարարներ, բանվորներ՝ շենքերի և շինությունների մակերևույթների մաքրման ու հարդարման, մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	6
715	Բանվորներ՝ հանքահորերի (հանքերի), բացահանքերի (կտրվածքների), թունելների և հատուկ նշանակության ստորգետնյա կառույցների շինարարության	10
721	Կաղապարողներ, եռակցողներ, դարբիններ, գրտնակողներ, նախապատրաստողներ՝ կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղի, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	12
722	Գործիքագործ - փականագործներ, հաստոցավարներ, կարգաբերողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	23
723	Մեքենագետներ՝ սարքավորումների, փականագործ-հավաքողներ և փականագործ-նորոգողներ	12
724	Փականագործ-հավաքողներ՝ էլեկտրական, էլեկտրամեխանիկական և ռադիոէլեկտրոնային սարքերի	11
725	Բանվորներ՝ արձնապատման, մետաղապատման և ներկման	1
726	Բանվորներ՝ օպտիկամեխանիկական արտադրության և հատուկ արտադրությունների	1
727	Բանվորներ՝ հղկանյութերի, սինթետիկ արվեստների, գերկարծր նյութերի և դրանցից պատրաստվող արտադրատեսակների և բնական արվեստների արտադրության	10
728	Բանվորներ՝ մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության այլ արտադրությունների	4
731	Բանվորներ՝ մետաղի և համանման այլ նյութերի վրա ճշգրիտ աշխատանքների	12
732	Բրուտներ, մամլողներ, կաղապարողներ՝ ապակուց, խեցուց, ձենապակուց և այլ նյութերից պատրաստված արտադրատեսակների, լանվորներ՝ հարակից մասնագիտությունների	1
733	Բանվորներ՝ գեղարվեստական արհեստների և գեղարվեստական արդյունաբերության այլ տեսակների արտադրությունների, բանվորներ՝ մետաղից, փայտից, մանածագործվածքից և այլ նյութերից արտադրատեսակների պատրաստման և վերականգնման	3
741	Բանվորներ՝ սննդի արդյունաբերության	95
742	Բանվորներ՝ փայտամշակման արդյունաբերության	12
743	Բանվորներ՝ մանածագործական արդյունաբերության	87
744	Մորթեգործներ, կաշեգործներ և կոշկակարներ	43
745	Բանվորներ՝ շինարարական նյութերի արդյունաբերության	13
751	Բանվորներ՝ տրանսպորտի բնագավառի	14
752	Բանվորներ՝ կապի բնագավառի	4
8	Օպերատորներ, ապարատավարներ, մեքենաներ, փականագործ-հավաքողներ՝ մեքենաների և կայանքների	177
811	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ հանքաքարի արդյունահանման և հարստացման կայանքների	6
812	Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և այլ մասնագետներ՝ մետաղահալ կայանքների	2
814	Օպերատորներ և ապարատավարներ՝ փայտանյութի մշակման և վերամշակման, թաղանթանյութի, թղթի, ստվարաթղթի, ֆիբրի և դրանցից պատրաստված իրերի արտադրության կայանքների	2
815	Ապարատավարներ, օպերատորներ և մեքենավարներ՝ քիմիական և նավթաքիմիական հումքի վերամշակման կայանքների	7

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

816	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ էլեկտրակայանների և ցանցերի կայանքների	4
817	Օպերատորներ՝ ավտոմատ հավաքման գծերի և արդյունաբերական ռոբոտների	2
821	Օպերատորներ, մեքենավարներ՝ մետաղի և հանքային հումքի վերամշակման մեքենաների և սարքավորումների	1
822	Օպերատորներ, մեքենավարներ և ապարատավարներ՝ քիմիական արտադրանքի արտադրության մեքենաների և սարքավորումների	15
824	Օպերատորներ՝ փայտամշակման սարքավորումների	4
825	Օպերատորներ և մեքենավարներ՝ տպագրական և կազմարարական մեքենաների	3
826	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ մանածագործվածքի (տեքստիլի), կաշվի, մորթու վերամշակման և դրանցից իրերի արտադրության սարքավորումների	15
827	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ սննդամթերքի և համանման այլ մթերքների մշակման սարքավորումների	5
828	Փականագործ-հավաքողներ	6
829	Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և փականագործ –հավաքողներ՝ անշարժ սարքավորումների, այլ խմբեր չներառված	12
832	Վարորդներ՝ ավտոմոտորանսպորտի	90
833	Օպերատորներ և մեքենավարներ՝ գյուղատնտեսական, հողափոր, ամբարձիչ, բեռնման-բեռնաթափման այլ շարժական սարքավորումների	3
9	Բանվորներ՝ որակավորում չունեցող	605
911	Վաճառողներ՝ փողոցում, և համանման այլ աշխատողներ	12
912	Մաքրողներ՝ կոշիկի, և աշխատողներ՝ փողոցում տարբեր ծառայություններ մատուցող	7
913	Սպասավորներ՝ տնային, հավաքարարներ՝ բնակարանների և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	131
914	Աշխատողներ՝ շենքերի սպասարկման, պատուհանների լվացման և համանման այլ աշխատանքների	22
915	Ցրիչներ, բեռնակիրներ, դռնապաններ և աշխատողներ՝ հարակից այլ զբաղմունքների	28
916	Հավաքողներ՝ աղբի, և համանման այլ աշխատողներ	37
917	Աշխատողներ՝ պատվեր ընդունող, սպասարկման ոլորտի կազմակերպություններում	32
921	Բանվորներ՝ գյուղատնտեսության, ձկնաբուծության, ձկնորսության և հարակից այլ ոլորտների	16
931	Բանվորներ՝ լեռնարդյունահանման արդյունաբերության, շինարարության, երկրաբանության և ընդերքի հետախուզման	13
932	Բանվորներ՝ մշակման արդյունաբերության	294
933	Բանվորներ՝ տրանսպորտի և կապի ոլորտի և բեռնակիրներ	13

Աշխատանքի տեղավորվածներն ըստ սեռի, 2019թ.

ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը, մարդ			2018թ. նույն ամսվա նկատմամբ, %			Աշխատանք փնտրողների նկատմամբ, %		
	ընդամենը	կին	տղամարդ	ընդամենը	կին	տղամարդ	ընդամենը	կին	տղամարդ
Հունվար	681	454	227	104.6	105.6	102.7	0.8	0.8	0.8
Փետրվար	770	537	233	85.4	92.6	72.4	0.9	1.0	0.8
Մարտ	1 087	728	359	124.4	134.1	108.5	1.3	1.3	1.3